

շապր: «Ու ցարի ժանդարմները եկան մի գիշեր եւ հայրիկիս բանտ տարան: Ինչպէս շա՛տ շատերին»: Սուգ է իջնում Շիրակի գիւղերի վրա: Ցաւին չի դիմանում ու մեռնում է տատիկը: Մայրիկի աչքերը միշտ արցունքալից: Հայրիկը չկայ: Ու «ես մտածում եմ. սուլթանը եւ ցարը Հայոց երկրի վիշապներն են: Նրանք մտնել են մեր երկրի աղբիւրին եւ ամէն օր ոստիկաններ են ուղարկում մեզ մօտ, որոնք ծեծում են մարդկանց, հրում, Սիրիի սառնամանիքները աւերում, որ այնտեղ ցրտից մեռնեն»:

Փոքրիկ Հայաստանը սակայն չի վերհասնում. «Լոյսը յաղթում է մթին, չէ՞: Ինչո՞ւ պէտք է չյաղթէ եւ մեր երկրում: Էս արդար արեւի երկրում: Զենաղ Արագածի ստորոտում: Նա կը յաղթէ»:

Այսպիսի հաւատով, կարօտով ու բրբռում յոյգով գրած է ամբողջ գիրքը, որ սկզբից մինչեւ վերջ համակ հեփեսք է ու երգ: Տիկ. Հայաստանը գրում է սրտով: Նա անկեղծ է, երբ ասում է, քէ՛ «սիրում էի Հայոց վեհափառ սարերը, հիանում մեր երկրի գրոյցներով, հպարտ էի այդ հողի, այդ

սարերի գաւաղը լինելուս»: Ընթերցողը էլ համակում է նոյն զգացմունքներով, երեւակայութեամբ փախադրում է նոյն աշխարհը՝ «վիշապների աշխարհը»:

Գիրքը գրած է մաքուր եւ գեղեցիկ հայերէնով: Ոճը՝ պարզ, պատկերաւոր ու կենդանի, ներդաշնակ ու երաժշտական: Էջեր կան, որոնք գեղեցիկ արձակ բանաստեղծութիւն են: Կարդացում են յափշտակութեամբ:

Գիրքը հրատարակած է ճաշակով: Կողքը զարդարած է հեղինակի հաւատը խորհրդանշող սիրուն նկարով՝ մի փոքրիկ աղջիկ, հրեղէն սուրը ձեռքին, նժոյգը հեծած սլանում է դէպի Հայոց լեռները...

«Վիշապների Աշխարհը», որքան մեզ յայտնի է, Տիկ. Գեորգեանի անդրանիկ գրական գործն է եւ, որպէս այդպիսին, անպայման յաջող է: Պէտք է մաղթել, որ շուտով լոյս տեսնէ եւ յաջորդ հատորը կամ հատորները: Տիկ. Գեորգեանին վերապահւած է պատուաւոր տեղ հայ կին գրողներու շարքում:

Ս. Վ.Ր.

A. SAFRASTIAN

"The Itinerary of Xenophon's retreat". The Asiatic Review, London, 1934.

Դարեհ Բ.-ի մահւանից յետոյ պարդի Արտաֆանքսէս Բ., իսկ կրտսեր որդի Արտաֆանքսէս Բ. իսկ կրտսեր որդի Կիրոսը բաժին ստացաւ Փոքր Ասիական Սատրապութիւնը: Քրիստոսից առաջ 401 թւին Կիրոսը հաւաքեց 13 հազարանոց վարձկան յոյների մի բանակ եւ շարժւեց հղթօր դէմ Պարսկաստանի գանը գրաւելու նպատակով: Վարձկան յոյների մէջ էր եւ աքեմենացի Քսենոփոնը, որ թողել է այդ արշաւանքի ներկարգութիւնը՝ հիմնւած իր օրը օրին կատարած արձանագրութիւնների վրա:

Յունական զօրամասը դուրս եկաւ Լիւ-

դիայից, 401 թ. մարտ 6-ին եւ անցնելով Փրիւգիայի, Կիլիկիայի և Սիրիայի վրայով՝ հասաւ Միջագետք, ուր նոյն տարւայ սեպտ. 5-ին տեղի ունեցաւ Կունիկսի ճակատամարտը: Հակառակ պարսիկների բւական գերազանցութեան, յոյների յաղթանակը եղաւ այնքան վրճարական, որ Արտաֆանքսէս թագաւ. լքեց իւր պատերազմի դաշտը եւ անցելիս թողնելով իր բանակը՝ դիմեց փախուստի: Բայց այդ միջոցին կուում սպանւեց տաֆարին Կիրոսը: Պատերազմը յոյների համար կարգրեց իր իմաստը: Կասկածելով Արտաֆանքսէսի դաւադր-

բուքիւններէց՝ նրանք որոշեցին զինած անցնել դէպի Սեւ Ծովի ափերը եւ այնտեղից նաւերով վերադառնալ Յունաստան։*)

Յայնքի այս արշաւանքի ուղեգիծը վաղուց ի վեր գրաւել է գիտնականների ուշադրութիւնը։ Յատկապէս վերջին երկու դարում բազմաթիւ ուսումնասիրութիւններ են կատարուել, ուր համգամանօրէն պարզուել է յայնքի անցած մանապարհը։ Մի շարք մանապարհորդներ անձամբ կտրել են Քսենոփոնի նկարագրած ուղին, մէկը — G Cousin — նոյն իսկ ոտով անցաւ Լիդիայի եւ եփրատի միջեւ ընկած տարածութիւնը։ Հակառակ դրան, մինչեւ այսօր էլ կան շատ վիճելի հարցեր, որոնք դեռ լուծման են սպասում, եւ համարեա ամէն տարի նորանոր լուծումներ են երեւան գալիս։ Այդ կարգի փորձերից է եւ Ա. Սափրաստեանի գրքակը, ուր նկատի են առնւած հայկ. հին ու նոր տեղերի անուններն ու հայ պատմագիրների հազարյա տեղեկութիւնները, ինչպէս եւ հեղինակի անձնական ծանօթութիւնը խնդրի առարկայ վայրերին։ Իր ասելով՝ Ա. Սափրաստեանը տառնեալ անգամներ ոտով ու ձիով անցել է Քսենոփոնի յիշած գետերը եւ երկար ապրել է այդ գետերի մօտ, վրանի տակ։ Անձնական այդ ծանօթութիւնը, ի հարկէ, մեծ ա-

ռաւելութիւն է հեղինակի համար համեմատած օտարների հետ։

Ա. Սափրաստեանը բնութեան է առնում ուղեգծի մէկ փոքրիկ մասը միայն, որ յայնքը կտրել են 5 օրւայ ընթացքում,*) Քենտրիտիս(այժմայ Բոնքանսու) գետը անցնելուց յետոյ։ Նոյնմը. 22-ին յունական զօրամասը անցաւ Քենտրիտիս գետը եւ նոյնմը. 27-ին հասաւ Տելէրոսս գետի եզրերը։ Այս փոքրիկ ուղեկտրոն է Ա. Սափրաստեանի գրադումի առարկան։ Արդ՝ ի՞նչ եզրակացութեան է յանգել նա։

Առհասարակ ուսումնասիրողները ցոյց են տալիս, որ յունական զօրամասը անցել է դէպի հիւսիս Բիքլիսի եւ Մուշի ուղղութեամբ եւ Տելէրոսս գետը համարում են կարա-սուն, որ արեւմուտքից քափում է Մուրադ չայի (արեւելեան եփրատի) մէջ, իսկ գիտնականներից ոմանք կարծում են, թէ Բիքլիսսուն է։ Սափրաստեանը ուզում է դէպի արեւելք տանել յայնքին, այդ պատճառով նա սրբագրութիւն է կատարում «Անարագիս»-ի 4-րդ գլխի երրորդ հատւածի սովորական եւ ճիշտ բնագրում։ Յիշեալ հատւածում աւանդ է. «Այնտեղից (Քենտրիտիս գետից) անցանք երկու օրւայ մանապարհ, 10 փարսախ, ճիւղէւ որ կտրեցինք Տիգրիս գետի ափերէնքը»։ Ա. Սափրաստեան քարգմանում է՝ մինչեւ որ անցանք Տիգրիս գետի ափերէնքի շուրջով։ Այսպիսով, յունական զօրամասը դարձնելով դէպի արեւելք՝ Ա. Սափրաստեանը յայտնում է հետեւեալ կարծիքը. «Երրորդ օր յայնքը ճիւղ իրենց առջեւ ունէին ծագող արեւը։ Արեւը պէտք է նրանց տար ուղ-

*) Յոյների այս փայլուն յաղթանակը կուրիկուսում, ինչպէս եւ յաջող անցքը փոքր Ասիայով ու հերոսական նահանջը դէպի Սեւ Ծով, յունական աշխարհին ցոյց տւին, թէ որքան տկար է Պարսկաստանը։ Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքը դէպի Պարսկաստան եւ Հնդկաստան հիմնւած է այս 10,000 յոյների արշաւանքի օրինակի վրա։ Հետագային, մի շարք ծովեղերեայ պետութիւններ եւ յունական զաղութներ անկախութիւն հռչակեցին Պարսկաստանից զարձեալ Քսենոփոնի նկարագրած արշաւանքի յաջողութիւնը ի նկատի ունենալով։

*) Յոյների մէկ օրւայ ճամբան — ըստ ստամոս — հաւասար էր 5 փարսախի, հարթ տեղը 25-30 կիլոմետր (փարսախը հաւելում էր 5-6 կիլոմետր)։ Վատ ճանապարհով, լեռներում կամ գետանցք ունեցող վայրերում ստամոսը աւելի կարճ էր։

դուքեան զգացումը: Նրանք (յոյները) ունեին ընդհանուր մտապատկեր, որ Սեւ Ծովի մանապարհը գնում է դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւելք եւ ոչ դէպի արեւելք: Սակայն եւ այնպէս, նրանք ընդունեցին Տելէրասի ուղղութիւնը Հայոց Ջորի վրայով» (էջ 12-13):

Տելէրաս գետը Սափրաստեանը համարում է խոշար-սուն, որ քափում է վանի լիւնը հարաւ-արեւելքից: Իսկ խոշար-սուն նշանակում է Տրպատունի գետի հետ: Տրպատունի հայ մախարաւական տոհմ է, որ իր անունը տւել է այդ մախարարութեան բռնած շրջանին եւ գետին: Տրպատունի անունը Տելէրաս անունով փոխարինելը Սափրաստեանը փորձում է բացատրել նրանով, որ Քսենոփոնը, իբրեւ բարձր զարգացման տէր մարդ, ծանօթ էր Հերոդոթի (V, 59) առաջ բերած մակագրութեան պղնձէ կաթսայի վրա, ուր յիշում է Տելէրաս ցեղի անունը, այլեւ կապրէի (կապրի կղզի) բնակեցման վերագրումը այդ ցեղի կողմից:

Սափրաստեանի տւած բացատրութիւնը, ի հարկէ, անհերք է: Հէնց այն փաստը, որ Քսենոփոնը խորապէս զարգացած մարդ էր, բաւական է որ մախդայիսի շփոթութիւն քոյլ չտար: Սափրաստեանը շատ աւելի բանաւոր միտք յայտնած կը լինէր, եթէ հարցը բացատրէր հնչիւնաբանական սկզբունքով՝ *արպ - ալպ - ալրա*, եւ աւելի լայնացւած ձեւով՝ *տեւեր*, եւ ապացոյցներ որոնէր այս ուղղութեամբ:

Ա. Սափրաստեանի վարկածը խախտւում է հէնց Քսենոփոնի բնագրի խեղա-

քիւրումով: Բայց կան եւ ուրիշ հիմնական առարկութիւններ: Յոյները շատ լաւ գիտէին, որ Սեւ Ծովի մանապարհը ընկած է դէպի հիւսիս եւ նոյնիսկ հիւսիս-արեւմուտք: Այդ ուղղութիւնից դէպի արեւելք շեղելը ո՛չ միայն երկարացնում էր մանապարհը, այլ եւ վերանգաւոր էր, որովհետեւ մօտեցնում էր նրանց քշմամի Պարսկաստանին: Յետոյ, եթէ յոյները իրօք գնացած լինէին Հայոց Ջորի վրայով, անհնար է երեւակայել, որ Քսենոփոնը չյիշէր վանայ լիւնը, որի փերով աւելի կամ պակաս հեռաւորութեան վրա անցած պիտի լինէին յոյները:

Ինձ բւում է, թէ պ. Սափրաստեանի գիզը՝ որոշել յոյների արշաւանքի մանապարհի այս մասի ուղղութիւնը՝ առնելով վաղածամ է: Նա առաջ պէտք է լուծէր հարցը իր ամբողջութեան մէջ, պարզէր յոյների բռնիք-սուից յետոյ անցած ուղին մինչեւ Սեւ Ծով, կամ գոնէ մինչեւ այն կէտը, ուր իր ընդունած մանապարհը միանում է ուրիշ գիտականների որոշած մանապարհի հետ: Թւում է թէ պ. Սափրաստեանը ինքն էլ գիտակցում է մտան աշխատանքի անհրաժեշտութիւնը. իր գրածքը մա վերջացնում է յայտարարութեամբ, թէ մըտադիր է որոշել յոյների մինչեւ Տրապիզոն անցած մանապարհի ուղղութիւնը՝ «այդ վայրերի ազգագրութեան, հին պատմութեան եւ տեղագրութեան մանրամասն ծանօթութիւններով՝ համաձայնութեամբ Հայաստանի, Իրանի, վրաց, արաբական եւ քրդական աղբիւրների»:

Յ. Զ.

